ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ՄԱԾՁԲ-22/39

ք.Երևան **«01» ապրիլ 2022թ.**

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետի ժ/պ Գ.Մուրադյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՋԱՋԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ-ն, ի դեմս կազմակերպության նախագահ Կ. Մովսեսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևանի քաղաքապետարանի կարիքների համար «Ջազի միջազգային օրվան» նվիրված մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1), ինչպես նաև՝ մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները: Ընդ որում Պատվիրատուն Կատարողին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Ծառայությունը չընդունելու դեպքում՝ սույն պայմանագրի 3.2-րդ կետի «ա)» ենթակետում նշված փաստաթղթերը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է ***30000000 (երեսուն միլիոն) ՀՀ դրամ:***

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև ***15000000 (տասնհինգ միլիոն) ՀՀ դրամը.*** Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

55.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության

մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **10** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Երևանի քաղաքապետարան	«ՋԱՋԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ
ք. Երևան, Արգիշտիի փ. 1	Երևան , Իսահակյան Փ. 28 1/3 տ.
Կենտրոնական գանձապետարան	«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900012410537	Հ/Հ 2470103397000000
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 02641111
Գ. Մուրադյան ----------	Կ. Մովսեսյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«01» ապրիլ 2022թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-22/39
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
Չ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Տեխնիկական բնութագիրը	Չ/Մ	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1.	79951110/ 146	Ջազի միջազգային օրվան նվիրված միջոցառումների շրջանակում անհրաժեշտ է՝ ս/թ ապրիլի 30-ին. Երևանի Կ.Դեմիրճյանի անվան մետրոպոլիտենի Հանրապետության Հրապարակ կայարանում անհրաժեշտ է ապահովել կենդանի հնչողությամբ ջազ բենդի ֆլեշմոբ-ելույթներ, առնվազն 60 րոպե տևողությամբ, ջազ բենդի և վերջինիս մասնակիցների թեկնածությունը անհրաժեշտ է նախապես՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո առնվազն 5 /հինգ/ աշխատանքային օրերի ընթացքում ներկայացնել պատվիրատուի հաստատմանը: Վերը նշված ֆլեշմոբ-ելույթների անցկացման համար ըստ անհրաժեշտության և մասնակից կատարողների տեխնիկական պահանջի և գեղագիտական տեսքն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով պետք է ապահովել համապատասխան տեխնիկական միջոցներ, այդ թվում մասնակից խմբի թվաքանակին համապատասխան չափսերով բեմահարթակ: Վերը նշված կայարանի ընտրված հարթակում անհրաժեշտ է ապահովել առնվազն 3X2 մ. չափսերով, երկկողմանի օրվա խորհուրդին համահունչ գովազդային, տեղեկատվական պաստառ Երևանի քաղաքապետարանի զինանշանի պարտադիր առկայությամբ: Անհրաժեշտ մշակել գովազդային տեղեկատվական պաստառի դիզայներական կոնցեպտը և մինչև պաստառի տպագրությունը նախապես՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 5 /հինգ/ աշխատանքային օրերի ընթացքում ներկայացնել պատվիրատուի հաստատմանը: Ապրիլի 30-ին ժամը 17:00-ից մինչև 22:30-ը Հանրապետության Հրապարակի շատրվանների երաժշտական ուղեկցությունը ապահովող ձայնային սարքավորումների միջոցով անհրաժեշտ է ապահովել ջազային ստեղծագործությունների ձայնագրությունների հեռարձակումը: Վերջինիս իրականացման համար անհրաժեշտ է հավաքագրել և էլեկտրոնային կրիչի վրա ձայնագրել տարբեր ժամանակաշրջաններում կատարված հայտնի ջազմենների ստեղծագործությունները, առնվազն 120 րոպե տևողությամբ՝ նախապատվությունը տալով հայ ջազմենների ստեղծագործություններին: Ստեղծագործությունների ցանկը և հերթականությունը անհրաժեշտ է նախապես՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո առնվազն 5 /հինգ/ աշխատանքային օրերի ընթացքում ներկայացնել պատվիրատուի հաստատմանը: «Ջազի միջազգային օրվան» նվիրված Կասկադի հարակից /«Գաֆեսճեան քանդակների պարտեզ», աստիճանավանդակների դիմացի հարթակ/ տարածքում անհրաժեշտ է ս/թ ապրիլի 30-ին կազմակերպել կենդանի կատարումներով համերգային ծրագիր առնվազն 4 ժամ տևողությամբ՝ ժամը	Դրամ	***30000000***	1	Ք. Երևան	30.04.2022թ

		18:00-ից մինչև 22:00-ն, հայաստանյան ջազ խմբերի և անհատ կատարողների մասնակցությամբ, ընդ որում համերգային ծրագրի մասնակից ջազ բենդերի քանակը պետք է լինի առնվազն 7 /յոթ/ միավոր, որից առնվազն 1 /մեկ/ միավորը ջազ նվագախումբ և արտերկրից հրավիրված առնվազն 2 /երկու/ արտիստ՝ երաժիշտ և/կամ երգիչ կատարող: Արտերկրից հրավիրված արտիստները պետք է կատարեն առնվազն 30 րոպե տևողությամբ ջազ կատարումներ՝ հայաստանյան արտիստների հետ համատեղ կամ առանձին ելույթներով: Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո առնվազն 5 /հինգ/ աշխատանքային օրերի ընթացքում՝ մասնակից խմբերի և անհատ կատարողների ցանկը, գեղարվեստական մասի ծրագիրը և սցենարը անհրաժեշտ է ներկայացնել պատվիրատուի հաստատմանը: Հայտնի խմբեր և կատարողներ են համարվում հեռուստատեսությամբ, ռադիոյով այլ զանգվածային միջոցներով երգերի կամ երաժշտական կատարումների արդյունքում հանրությանը հայտնիություն և/կամ ճանաչելիություն ձեռքբերած խմբեր և կատարողներ: Համերգային ծրագիրը հանդիսավարելու նպատակով անհրաժեշտ է ապահովել առնվազն 1 /մեկ/ հանդիսավար, որի թեկնածությունը անհրաժեշտ է նախապես՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո առնվազն 5 /հինգ/ աշխատանքային օրերի ընթացքում ներկայացնել պատվիրատուի հաստատմանը: Վերջինիս իրականացման համար ըստ համերգային ծրագրի մասնակիցների կողմից առաջադրվող տեխնիկական պայմանների ապահովել և սպասարկել հետևյալ տեխնիկական միջոցները և աշխատանքները. Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 5 /հինգ/ աշխատանքային օրերի ընթացքում պատվիրատուի հաստատմանը ներկայացնել՝ բեմահարթակի նախապես պլանավորված 3D պլան, գծագիր բեմահարթակի ալյումինե կոնստրուկցիաների դասավորվածությամբ և չափսերով, ինչպես նաև նախատեսվող տեխնիկական միջոցները, որոնք օգտագործվելու են տվյալ հարթակում: Ձայնային սարքավորումներ առնվազն 35 կվտ, 110db ձայնային ճնշումով, որակյալ թվային ղեկավարման վահանակով որը կունենա առնվազն 48 մուտք և 24 ելք: Ապահովել կենդանի ձայնով երգերի և երաժշտական գործիքների կատարման համար անհրաժեշտ սարքավորումներ: Լուսային սարքավորումներ 86 միավոր, Բեմական հարթակի պաստառների պատրաստում, տպագրում և պաստառապատում, Բեմահարթակ 80 ք/մ մակերեսով: Ալյումինե կոնստրուկցիա, ծածկով, չափսերը 11մ. լայնությամբ x 8մ. խորությամբ x 7մ. բարձրությամբ, Բեմահարթակ տելեսկոպ ոտքերով, Ընդհանուր չափսը՝ 10մ. լայնությամբ x 8մ. խորությամբ x 1մ. բարձրությամբ, Շարժող լուսատու սարք ԼԵԴ 19 անգամ 15 Վտ հզորությամբ՝ 32 հատ, Շարժող լուսատու սարք ԲԻՄ 16R 330 Վտ հզորությամբ՝ 16 հատ, Շարժող լուսատու սարք Spot 20 R 4 – 50 աստիճան բացվածք 440 Վտ հզորությամբ՝ 14 հատ, Լուսատու սարք ԼԵԴ 7 անգամ 20 Վտ հզորությամբ՝ 24 հատ, ԼԷԴ էկրաններ 8 մետր լայնությամբ և 3 մետր բարձրության, որպես բեմի ետնամաս: ԼԷԴ էկրանների քայլերի խտությունը անհրաժեշտ է լինի մինչև 5մմ, նախատեսված դրսի պայմաններում աշխատելու համար: Վերը շարադրված տեխնիկական միջոցները շահագործելու նպատակով ապահովել համապատասխան ձայնային, լուսային սարքավորումները սպասարկող ռեժիսորներ, լեդ էկրանը շահագործող մասնագետ, որոնց թեկնածությունը նույնպես ներկայացնել պատվիրատուի հաստատմանը պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 5 /հինգ/ աշխատանքային օրերի ընթացքում: Ինչպես նաև լեդ էկրանին հեռարձակելու նպատակով պատրաստել լեդ կոնտենտ, գլխադիր Երևանի քաղաքապետարանի					

		լոգոյով, բացառելով լեդ բանկից օգտվելու հնարավորությունը: Բեմահարթակի երեք կողմերն քողարկելու և օրվա խորհուրդը հանրահռչակելու համար՝ անհրաժեշտ է մշակել գովազդային, տեղեկատվական պաստառի դիզայներական կոնցեպտը և պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 5 /հինգ/ աշխատանքային օրերի ընթացքում ներկայացնել պատվիրատուի հաստատմանը: Պատվիրատուի հետ համաձայնեցված գովազդային, տեղեկատվական դիզայներական կոնցեպտին համապատասխան անհրաժեշտ է բեմահարթակի երեք կողմերի համար և համապատասխան չափսերով տպագրել և բեմին ամրացնել պաստառները: Լուսային կառավարման վահանակ Avolites Titan Mobile կամ համարժեք: Ապահովել համարժեք կոմուտացիա: Ըստ անհրաժեշտության և համերգային ծրագրի մասնակիցների պահանջի ապահովել երաժշտական գործիքներով և այլ անհրաժեշտ տեխնիկական միջոցներով: Միջոցառումը պատշաճ մակարդակով գովազդելու և հանրահռչակելու նպատակով անհրաժեշտ է **ապահովել օրվա խորհրդին համահունչ գովազդային հոլովակ առնվազն 60 վարկյան տևողությամբ, որն** անհրաժեշտ է նախապես ներկայացնել պատվիրատուի հաստատմանը պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 5 /հինգ/ աշխատանքային օրերի ընթացքում: Սոցիալական ցանցերի և կայքերի միջոցով ապահովել վերջինիս մարքեթինգային առաջխաղացումը միջոցառման մեկնարկից առնվազն 5 /հինգ/ օր առաջ, մինչև միջոցառման անցկացման օրը ներառյալ: Տեխնիկական միջոցները շահագործելու նպատակով ապահովել համապատասխան հզորության էլեկտրաէներգիայի սնուցումը 3 ֆազի համակարգով: Բեմահարթակը և վերը շարադրված տեխնիկական միջոցները անհրաժեշտ է ապահովել միջոցառման մեկնարկից առնվազն 12 ժամ առաջ: Միջոցառման ավարտից հետո՝ 8 ժամվա ընթացքում իրականացնել տարածքի աղբահանության և սանմաքրման աշխատանքները:					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410537
ՀՎՀՀ 02593108

Գ. Մուրադյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՋԱՋԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ
Երևան , Իսահակյան Փ. 28 1/3 տ.
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470103397000000
ՀՎՀՀ 02641111

Կ. Մովսեսյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
«01» ապրիլ 2022թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-22/39
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	***Ընդամենը***
1	79951110/146	Մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ	----------	----------	----------	15000000	30000000	30000000	30000000	30000000	30000000	30000000	30000000	30000000	***30000000***

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410537
ՀՎՀՀ 02593108

Գ. Մուրադյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՋԱԶԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ
Երևան , Իսահակյան Փ. 28 1/3 տ.
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470103397000000
ՀՎՀՀ 02641111

Կ. Մովսեսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
«01» ապրիլ 2022թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-22/39
ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«01» ապրիլ 2022թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-22/39
ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն